

» տիկոյ» / թերեւս յիշելով վեհնետիկոյ նեղուց ըլլալը . իսկ միւս յիշեալ քառարաց միջի և զրսի բնագրածակութիւնը , իրեն ալ սրտնեղութեան ատեն պյապէս ըսել տուեր է : Բայց լաւ է որ գոհութեամբ կ'աւարտէ գրուածը .

« Փառք շինողին օրինողին , պակաս չըներ զնափաղանին .

Այս կարուղի վայելեն , օրհնեն գտուողըն պարզեւաց» .

Եւ կրկին փառատրութեամբ կը կնքէ . « Փառք Աստուծոյ յամենայն ժամ» :

Կըրնանք մենք ալ փառաբանակից ըլլալ առ Տուողն պարզեւաց , որ այնպիսի մութ և խուզ դարս մէջ (Ժ.Զ) ասանկ սուր թէ և անհարթ կամ անօգնական հանճարներ պարզեւեր է մեր իշաշտուրներուն , որ է բաել թէ մեր անծանօթ հանճարեղ ազգայնոց մէկ քանին յայտներ է , իրենց հայրենի երկրէն շատ հեռու և անկարծելի կողմեր : Կարծեմ այս վերոյիշեալ ներէն և անոնց ժամանակակից՝ շատ աելի հանճարեղ և հնարագէտ քան զկենեմն , մեծագոյն տօրակ շինող և ծովուն յատակը քերող Հայ մ'ալ պիտի ճանշցուի , որ երեւի թէ նոյն իսկ իրեն բազմահնար յաջողութեան համար՝ հանրածանօթ ըլլալով այն ժամանակ , ի վեհնետիկ յատկաբար Հայն կոչուեր է , L'Armeno , ինչպէս յաճախ կը գրուի քաղքին Դիւտանաց մէջ :

ԽՈՄՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԵՒ ՄԻԱԲԱՆԻ ԸՐԱԾ ՄԻ

ՆՈՐ ԳԻՒՇԻ ԱՌԹԻՒ



« ՈԱՐԱԾ » ամսագիրը՝ ժամանակէ մ'ի վեր նորանոր ոյժեր ընդունելով իւր խմբագրութեան մէջ , արդէն ակսել է իւր նոր ուղղութեան հետ՝ օրէ ցօր կարեւորութիւն ևս ստանալ , մասնաւոր կերպով մեր սիրելի սահմանեաց անյայս և կամ անտիպ մնացած երկասիրութեանց հաստուկտիր հաստածոց հրատարակութեամբք , զոր հետքնետէ հանելով զարաւոր փոշիներու մէջէն՝ կու տայ ՚ի վայելս ազգասէր ուսումնասիրաց : Այսպիսի հնդասիթ շարժման մ' գործունեայ վաստակաւորաց մէջ ծանօթ էր մեր՝ զեռ երկու տարի յառաջ Մ. Խորենացւոյ Պատմագրութեան վրայ հրատարակուած շահազրիո յօդուածներով՝ Միաբան մականուանեալ սրամիս ոմն , որուն ուսումնասիրութիւնքը մնացին և կը մնան գեռ առանց եղրակացութեան : Իսկ ներկայ տարին բացաւ նա Անանիա Նարեկացւոյ խոստովանուրեան Գրոյն և 158 հերձուածներու՝ նախնեացմէ մնացած թարգմանածոյ համառոտագրութեամբը , որոնք կրօնականէն զատ պատմական արժէք մ'ալ ունին : Իսկ այժմ , այսինքն է Ապրիլ ամսաթերթին մէջ , կու գայ զարձեալ ՚ի հան-

գէս՝ իւր խոսրովիկ քարգմանիլ մակագրեալ նոր յօդուածով, յորում կը ներկայացնէ մեզ «Արտասանութիւն խոսրովիկայ քարգմանիլ ՚ի մենամարտիլ Դաշտի և Գողիարու» ընծայուած երկու էջ գրութիւն մի, որուն ըսկըգնաւորութիւնն է. «Պատերազմական հանդիսիցն զումարք», ևայլն:

Սակայն խոսրովիկայ ընծայուած այս Արտասանութենէս աւելի՝ անոր անձին և միւս գործոց վրայ Միաբանի ունեցած և մեզի առւած հետևեալ սեղեկութիւնքը մասնաւոր զիտողութեան արժանի են: Նորա կարծիքով՝ Ա. Խոսրովիկն՝ երկրորդ զառու թարգմանիներէն էր, այսինքն է Ա. Խորենացոյ ընկերակից, ծաղկել է նա Եր, զարու երկրորդ կիսում, և Ամսիսիւն յետոյ կնքած է իւր մահկանացուն՝ օտարութեան մէջ թ. խոսրովիկայ ընծայուած վերոյիշեալ գրութիւնը՝ Մայր-ցուցակի թիւ 940⁽⁴⁾ ձեռազրի մէջ միայն կը գտնուի, և թէ մինչև ցարդ գեռ չէ հրատարակուած և ծանօթացած, զոր ինքը կը փութայ տուաշին անզամ հրատարակել, իրբն նշխար ոսկեղէն զարու և իրբն նմուշ՝ հին զրականութեամբ պարապողներուն: Գ. յառաջ անցնելով մատնանիշ կը ցուցնէ մեզ խոսրովիկայ մի այլ գրուածք, որ իրը թէ նոյնաէս բոլորովին անծանօթ է մեր բանակըներուն, և Էջմիածնի Մատոնազգարանի (Մայր-ցուցակ թիւ 655) ձեռազրին մէջ միայն կը գտնուի այս խորազրովով. «Խոսրովիկայ քարգմանիլ Հայոց առանուիկ, որ ասեն բնուրեամբ անձն և անսկիզբն ընկալեալ զմարդկուրդիւն Աստուած Բան ՚ի կուսէն», որ և Մայր-ցուցակի մէջ նշանակուած է ուրիշ մակագրութեամբ. «Բանք վասն մարդեղութեան Յիսուսի՝ ՚ի խոսրովիկայ թարգմանէ Հայոց»: Դ. կը ծանուցանէ, թէ իւր գիտցածին համեմատ՝ այս տուաշին գրուածքն է (Եղարուն) ընդդէմ Քաղկեդոնի ժողովոյն, և խոսրովիկայ մեր ձեռքն հասած երկասիրութիւններէն կարեռագոյնը. բայց դժբաղսար Էջմիածնի յիշեալ ձեռազրին մեզի ընծայածը բոլոր բախանզակ 5 թուղթ մի թերատ հատուած () է՝ այն ընկարածակ գրութենէ, զոր Յովհն Երգնկացի՝ Ժդ դարուն զեսեղեց մէկ զրբի մէջ Անանիա Սանահնեցու և Սարկաւագ վարդապետի գրութեանց հետ, յորմէ նոյնաէս մասն մի միայն կը գտնուի անդ:

Ահա Միաբանի յօդուածի զյխաւոր կէտերը, զոր ըստ մտաց հեղինակին ուղեցինք մէջ բերել՝ ինչպոց էութիւնը պարզելու համար յաջս «Բազմավիպիկ» ընթերցողաց: Եւ ո՛րչափ շնորհապարտ պիտի մնայինք յօդուածագրին, եթէ նորա մեզի յայսնած զիւտերն՝ սուուզիւ նոր զիւտեր լինէին, ինչպէս և խոսրովիկայ մասին տուած տեղեկութիւններն այլ՝ ըստ ամենայնի սույզ և

1. Հայ. հին Դպրուրեան մէջ՝ երկիցս թիւ 920 ձեռագիրը կը յիշուի՝ ԱՄանեադարանին կամացնի, զոր և Միաբանը նոյնաէս մէջ բերած է, սակայն առանց ըսելու, թէ մո՞ն է ուղիղը:

2. Որուն համար կըսուի նախ, թէ 10 երեսներէ բազկացած է. իսկ քիչ յետոյ 19 ½ էշերու կը վերածուին, չգիտեմ ինչ հաշուով:

հաստահիմն ճշմարտութիւններ : Քայլց քննադատական փորձաքարին ենթարկելով վերոյիշեալ կէտերէն իւրաքանչիւրն առանձին, դժբաղդաբար այլ ինչ եղած պիտի տեսնուին, քան ինչ որ կարծեր և կարծել առւած է նա շատերուն Ռւատի, իրեւ խուզարկու ճշմարտութեան, պահելով ամենայն յարգութիւն և համակրութիւն առ ուսումնատենչ յօդւածագիրն, հարկ կը համարինք մի քանի գիտազութիւններ ընել նորո առւած տեղեկութեանց վրայ . մանաւանդ թէ այս պատեհիւս կը յուսանք հաղորդել միանգամայն այնպիսի եղելութիւններ, որոնց յայտնութիւնք պիտի կարենան ոչ միայն Միաբանին, այլ և ամենայն քննասիրաց ախորժալուր և օգտամատոյց լինել :

Սկսինք առաջին կէտէն : Արդ ենթազրելով առ ժաման, թէ « Արտասանութեան » հեղինակն եղած ըլլար հինաւուրցն խոսրովիկ, զոր յիշեն Ղազար և ուրիշներ, կարելի՞ է արգեօք զասել զնա 'ի շարա երկրորդ կամ կրտսեր թարգմանչաց, և բայց ընդ Միաբանին, թէ Ե դարուն վերջ և խորնց ծերունիւն վերջը վախճանած է նա : կարծեմ թէ ոչ : Եւ յիրափ, նոյն իսկ Ղ. Փարագեցոյ առ վահան գրած թղթին այն տեղին () զոր նա իւր կարծեացն իրեւ հաստատուն կռուան մէջ կը բերէ, չկարէ լինել իրրի ժամանակազրական և որոշիչ մի փաստ՝ խոսրովիկյ կենաց և մահուան . վասն զի Ղազար ուզած է անդ յիշատակել միայն իւր նախորդ առաքինեաց հայածանքն, և ոչ թէ նոցա մահուան ժամանակազրական կարգը ցացնել . որովհետեւ Մ. Խորենացիէն վերջ՝ Տէրն կամ Տիրայր Խորձենացին կը յիշատակուի և իւր հալածուիլն, մինչդեռ սա երիցագոյն (8) էր անտարակոյս ժամանակաւ քան զՄովիկն . այսպէս Մովիսիւն վերջ ալ կը յիշուին Մ. Գր. Լուսաւորիչ, Մ. Ներսէս և Սահակ : Եւ նոյն իսկ Փարագեցոյ քիչ յետոյ ըրած այս բացատրութիւնն իսկ, թէ « Ոչ յիբեկոյս ինչ ժամանակաց զրուցատրութեամբք յումեքէ համբաւոց ծանուցաւ մեզ, այլ առ մեռց իսկ և 'ի մերում ժամանակի եղեալ տեսաց զայս ամենայն », — զոր մենք զինքը հակածող արեղաներու արարքը միայն ցացնելու համար ըստած կը կարծենք, — եթէ խոսրովիկին ևս վերաբերել ուզուի ուզգակի, դարձեալ կը մնայ ըսել, թէ Փարագեցին այն ախոր գէպին հանդիսատես եղած ժամանակ՝ զեռ զե-

1. Ուր կըսուի 'ի մեղադրութիւն արեղայից Հայոց . « Անարտա և յամենեց յունաց յարգելի յայն աէր Խոսրովիկ, չե ևս հասեալ 'ի սահմանս մեր, մինչդեռ գայր 'ի ճանապարհի և լուան, որպէս 'ի վերայ թշնամեոյ ընդդէմ զինեցան, առելով . Ահա, ուր գայ միւս թարգմանն : Եւ օրհնելոյն 'ի հեռաստանէ լոււել զդուցիւն համաձայն աղեղանցն՝ ազօթեաց առ բարձրեալն, և վազվակի ընկալու զինդիրն . որում և տենչալի նշխարացն այլք՝ և ոչ մեք՝ արժանի եղեն ընդունակութեան » : Տես ապ. Վենետիկյ, 1873.

2. Կորիւն, տպ. Վենետիկյ 1833, էջ 14. Մ. Խորենացի, Պատմ. Գ. գլ. Մ. և Փարագեցի, Պատմ. գլ. Ժ. կը գնեն զՏիրայր իրրի զմին յառաջին թարգմանչաց և օգնական Մ. Մեսրովիայ 'ի վարդապետէն զՊողթն և զՎիրու:

ռատի պատանի մի կարէր լինել. իսկ Մոլսէսն և Խոսրովիկ յոյժ ծերացեալ:

Ուստի մի ուրիշ հնագոյն և վառերական յիշատակարանի⁽¹⁾ վկայութեամբ՝ որ, — կարծեմ թէ այլուր պարզապէս յիշուած է և ոչ հրատարակուած, և մեր ձեռապատան և վատիկանի երկու գրչագրաց մէջ կը գտնուի, — կարելի է ապացուցանել, թէ երանելին խոսրովիկ՝ Միարանի կարծածին շափկրսէր չէ ժամանակաւ. մանաւանդ թէ բուն յառաջին թարգմանիչներէն մին: Արդ՝ նախ զիտելու ենց՝ որ այս յիշատակարանիս մէջ Մոլսիսի թարգմանի, կամ անկէ աւելի երիցագունի մի հարազատ գործ լինելու հակառակամարտ բան մի չի կայ, բաց ՚ի յետազայ երկու կէտերէն, այլինքն է, Ա. կը յիշուի ասու «Ղազար թարգմանիչ», (որ) երեր ՚ի Հայս ՚ի ԺԴ. ամի թարգմանուուեան Ս. Սահակյա զկարգս վասն Ազապս առնելոյ և վասրն Քահանացարադից, զոր արարեալ է երանելոյն Եփրեմի խորին ասորւոյ, ՚ի Նիկոլիկացոց քաղաքին»: Բ. Օրհնութիւնաբեր ցուցակի կարգաւորութեան ժամանակն՝ «որ էր, — ըստ յիշատակարանիս, — յետ ՃՇԱ ամի անցանելոյ (Գրիգորի) յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հըրամանաւ սրբյան Սահակյա, ձեռամբ իմալ Մոլսիսի՝ գրչի Սահակյա Պարթևի ՚ի փառա Աստուծոյ»: Որովհետև հայերէն նշանագրոց զիւտն և թարգմանութեան սկզբնաւորութիւնը լինելով 496—412, այս ժամանակամիջոցիս ոչ Մ. Խորենացի կարող էր Ս. Սահակյա քարտուղար լինել, և ոչ ասկէ 13 տարի վերջ մեզ ծանօթ Ղ. Փարպեցին կարէր ՚ի Յոյնս գացած, ուսմունքն աւարտած և զզիրս Ս. Եփրեմի առ Սահակ բերած լինել: Բայց այս զժուարիթիւնս հարժած կը լինի՝ եթէ զիտենք Հ. Միք. Զամէեանի⁽²⁾ հետ, թէ Ղազարս այս՝ մեզ ծանօթ Փարպեցի պատմագիրը չէ, այլ մի ուրիշ հինաւուցը Ղազարիկ. իսկ Մոլսէսին համար յենց սխալիր, եթէ Զամշեանի⁽³⁾ հետ բանց, թէ Խորենացի քերթողանայրը չէ նա, այլ Ցարօնեցին Մուշէ որ և Մուսէ, որ երիցագոյն թարգմանչաց զատէն էր, և ըստ վկայութեան կորեեան և Խորենացւոյ՝ էր նա վարժապետ երկրորդ թարգմանչաց. կամ նա ինքն Մոլսէս Մանազկերացին, որուն համար կ'աւանդէ ֆարպեցի, թէ Գիւտէն յառաջ կաթողիկոս նաստած էր:

Եիշատակարանիս հնագութիւնն աներկայելի գոլով, այսպէս կարելի է ա-

1. Որուն խորագիրն է. «Կարգաւորութիւնք ցուցման օրհնութիւնաբեր ցուցակն, թէ ալ ոք կամ յորհեմ ժամանակաց հայրապետաց էն արարեալ զկարգը՝ օրհնութիւնաբեր ցուցակիդ, և թէ ալ ոք երեր ՚ի Հայոց աշխարհս և որոց հրամանաւ կամ կարգաւորութիւնն: — Երանելոյն Մոլսիսի թարգմանի, որ էր գրիլ սրբյան Սահակյա հայրապետին Հայոց որդու Արքյան Ներսիսին Այս խորագիրս հաւանօքէն յիշատակարանին մէջ եղած բացարութիւններէն կուլմուած է»:

2. Պատմ. Հայոց հա. Ա. էջ 536:

3. Անդ հա. Ա. էջ 536,

նով որոշել մերձաւորապէս խօսրովիկայ ժամանակամիջոցը : Արդ՝ յիշատակառանիս սկիզբը կ'ըսուի Ա. թէ « Յետ Ճ՛մԱ ամի սրբոյն Գրիգորի եղեւ ըսկիզբն թարգմանութեան 'ի հայերէն լեզու» : Բ. թէ « Յերկրորդ ամի թագաւորավթեան Վասիչապհոյ առաքէ սուրբն (Սահակ զթարգմանիչս) առ 'ի բերել զՄերմանորհնէքն և գեանոն Ջրօրհնէլց», և այլն : Գ. Որոշակի կը ծանուցուի , թէ « Յետ Ճ՛մԱ անցանելց Գրիգորի այս ամենայն (այսինքն է կարգաւորութիւն Մաշտոցին) հաստատեալ նորոգեցա հրամանաւ սրբոյն Սահակյ, ձեռամբ Մավսիսի՝ զըշի սրբոյն Սահակյ Պարթևի» : Արդ՝ այս երեք կէտերէս յայտնապէս կը տեսնուի , թէ Նշանագրոց գիւտն, հայերէն թարգմանաթեան սկիզբն և Օրհնութիւնաբեր ցուցակի կամ Մաշտոցի կարգաւորութիւնն եղած են Վասիչապհոյ թագաւորավթեան Երկրորդ տարին : Խոկ արգ Վասիչապհոյ թագաւորավթեան Երկրորդ տարին, սրբոյն Մերսորվայ թարգմանութեան Փերրորդ տարին և Ս. Սահակյ կաթողիկոսութեան 24 տարին իրարու հետ համեմատելով կը հանդիպին փրկչական թուականի 410 —412ին . ուրեմն այս ժամանակամիջոցիս պէտք է որ երանելին խօսրովիկ ըլլար գէթ 20—25 տարեկան, որպէս զի կարենար Ա. Սահակյ կողմէն դրկուիլ յԵրուսաղէմ՝ Ս. Բարսղ Ջրօրհնեաց կանոնը թարգմանելու և բերելու 'ի Հայս : Ուրեմն մերձաւորապէս կարելի է եղանակացնել, թէ խօսրովիկ մօտ 387ին ծնած ըլլար . 'ի հարիէ նաև երիցապոյն թարգմանչաց գրէթէ հասակակից :

Խոկ թէ Ե՞րբ արդեօք և ինչպիսի՞ պարագայից մէջ հալածուեցաւ նառ 'ի տուտանուն արեղայից, ո՞ւր մեռաւ, և թէ ի՞նչ շափով պատշաճեցնելու է անոր Ղ. Փարագեցոյ վերոյիշեալ տեղին . այս բանս որոշելը շատ զժուար է, զի զրաւոր յիշատակարանը կը պակսին մեզ : Հօս այշափս կարեմք ըսել, թէ խօսրովիկ առաջին գարձին 'ի հայս անկարելի է՝ որ Ղազարէն պատմուած հալածանքը տեղի ունեցած ըլլայ . որպէսէտև այս ժամանակ Ս. Սահակ զեռ ողջ ըլլարալ՝ ոչ Հայոց արեղայիցն այն մոլենախանձ վիճակին զեռ հասած էին, և ոչ խոկ մեր թարգմանիշներն անոնցմէ խիթալու կամ խուսելու առիթ ունէին : Ուրեմն բոլորովին մի ուրիշ ժամանակ և պարագայ որոնելու է, այսինքն է Քաղկեդոնի ժողովքն և Յունաց հետ թշնամանալէն :

Խոկ գաղով Միհաբանի Երկրորդ կէտին, կ'ըսենք, թէ կարելի է՝ որ խօսրովիկին ընծայուած « Ալտասանութիւնն » իրօց նորա հարազատ գրծերէն մին ըլլայ . այս նկատմամբ ոչ ընդդիմադրելու կամք ունինք և ոչ խոկ մերժելու ժամանակ . թէպէտ և հակառակ կարծել և ապացուցանելն աւելի հեշտ է և բանաւոր : Բայց ո՞չափ մէծ զարմանք կ'ազդէ Միհաբանի վերջին նախագասութիւնն, երբ բանալով յաղագս Պիտոյից (3) Թ. զրոց Գ. զումիը կարգանք մի և նոյն խօսրագիրը, « Ալտասանութիւն միայնամարտուրեան

1. Վասն զի գրչագիրներէն ունաց մէջ « յԵրրորդ ամի թարգմանութեան սրբոյն Մերսորվայ և 'ի իլլ. ամի հայրապետութեան սրբոյն Սահակյ», գրուած է:

2. Ս. Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վէնետիկ 1865, էլ 537.

Դաւրի և Գողիարու» : Այս՝ խորնոյ ծեր հոետորին՝ զպատանին թէու դորս հոմերոսաբար և զեմասթենէսօրէն հրահանգելու յոլորակի արտասահնովեան՝ ամբողջ այս զլուխո բաղդասաելով յանուն խոսրովկայ « Արարատի » մէջ, յէջ 280, լոյս տեսած այն նորագիւտ հատուածին հետ, բառ առ բառ նոյնը կը քանինք, բաց 'ի մի քանի բառերու և քերականական կիրառութեանց տարրերութիւններէն⁽⁴⁾ : Մենք չենք սպասեր այնպիսի մի նոր զիւտի, զոր Մինիթմարեանց մամուլն արդէն ասկէ 25 տարի յառաջ 'ի հրապարակ հանած էր : Եւ եթէ այսօրուան գրաբարատեաց պուետիկոսներէն կամ հրապարախօսներէն մին, որոնք իրենց մթնոլորտի մէջ շրջող իրաց, մեռելոց զանկերուն, կենդաննեաց ծոծրակներուն և բանայիրներուն լպիրշ պատկերներուն առելի կարեւորութիւն կու տան՝ քան թէ մեր ոսկեղարու մատենից և մատենագրաց, — ընծայած լինէր մեզ այսպիսի զիւտ մի, գուցէ թէ զուարճանան:

1. Զորս քննասիրաց հետաքրքրութեան համար կը դնենք ասա գէմ ընդ գէմ :

ԷջՄիԱԾՆԻ ԶԵՌԱԳԻՐՆ

« Արտասահնութիւն Խոսրովկայ թարգմանչի ՚ի մենամարտիլն ո, և այն.

« Զիամարտութեամբ և հետևակամար.

« առաթեամբ և գլխովին նաւակուիւ.

« տեսութեամբ » .

« Զի ՚ի թաղման անգամ արժանաւու.

« բեալ զիւրսն արտորոշէ անկեալս » .

• • • • • • • • • • • •

« Եւ ձիավարութիւն » և այլն.

« Փութայ հնարել »

« Խոկ հետևակամարտութիւնն առա.

« Աել քաշանայ բանիւ »

« Մարացող գործեւքն »

« զաշխարհի գովութեանցն »

« տանել միցանակ »

« մեռանելով »

« արդարութիւնն »

« ձերյադ »

« բաժանեալ ուներ »

« կողմանն ունելով »

« նոյն և յերկրորդութն »

« Խրախս կարծեւքն »

« այնակո ցուցաներ »

(պակասի)

« . այց այն էին պարծանք սուտ վերե-

« բռութեան » :

ՎԵՆԵՑԿԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Խորենացւոյ « Արտասահնութիւն միայնամարտութեան », և այլն.

« Արվածարտութեան՝ ձիավարութեամբ և հետևակամարտութեամբ » .

• • • • •

« Զի և թաղման անգամ արժանի ոչ արարեալ զիւրսն արտորոշէ անկեալ » .

« Ամս »

« Խոկ ձիավարութեանն » և այլն.

« Փութայ հնարել »

« Խոկ հետևակամարտութիւնն առաւել »

« քաշանուն բանիւ »

« մարտացու գործեւքն »

« զաշխարհագովութեանցն »

« տանելով մրցանակ »

« մեռանել »

« արդարագործութիւնն »

« ձերյաց »

« բաժանելով ուներ »

« կողմանն ուներ »

« նոյնակէս և յերկրորդին »

« Խրախսական իմն կարծեագ »

« այնակո ցուցաներ »

(ամառակէր)

« Բայց այն էին, որպէս նշանակէր,

« պատրանք կարծեաց սուտ վերաբե-

յինց և մոռանայինց իսկ այնպիսի նկարագրութիւններէ և պատկերներէ զգացած զգուանքն և զայրյոթը բայց Միաբանի պէս ուսումնատենջ և քննասէր մէկու մի համար անհասկնալի և զարմանալի չէ^o այս Այլ հանդիրձ այսու պէտք է ըսել, թէ այն հրատարակութիւնն, ուրիշ կողմանէ, ունի իւր օգտամատոյց ծառայաթիւնը. վասն զի այս պատառիկիս հրատարակութիւնմբ՝ նոր ապացոյց մ'ևս կ'ունենանք, թէ յընթաց ժամանակաց ո'րչափ և որպիսի՞ փոփոխութիւններ կրած են մեր նախնեաց ծանօթ երկասիրութիւնցն անզամ: Մանաւանդ թէ այսու առիթ կ'ունենանք քննելու, թէ քանի՛ քանի յունարէն յայտնի և անյայտացած գործերու հատուկափր հատուածներ մուտք գտած են մեր Քերդորդաօր զրուածոց մէջ. և թէ, ո՞ զիսէ, ո'րքան հետեւակ գրաւածներ իսկ իրեն ընծայուած են, — նոյն իսկ Պիտոյից գրոց հաւաքարանութեան մէջ, — որոնք իրաք այլոց կը պատկանին: ի նկատի ունելով վերոյիշեալ տարրերութիւնցն և յաւաբանութիւններն, անտեղի չէ մինչև ան-

« սմին հակառակ »
 « շնորհաք առաքինութեան »
 « բերեալ ձեւ »
 « անցեալ իմն նշկահեր »
 « տարածմամբ »
 « 'ի վերին յօդնականութիւնն »
 « Զայս ցուցաներ »
 « նախախնամող զօրութիւնն »
 « իսկոյն լոկ միայն »
 « մախաղ ընդ ունիթ »
 « բերեալ »
 « զողորկ իմն »
 (պակասի)
 « արձակեալ »
 « ջախջախելով անցանել ըստ »
 « 'ի ներս յուղիղն »
 « միոյն »
 « զզօրութիւն »
 « հասանելով 'ի վերայ և արագապէս »
 * * * * *
 « քաջութեամբ »
 « անդէն »
 « հատուածեաց »
 « Յորմէ ՚ի փախուստ այնուհետեւ »
 « գարձեալ լիներ այլազգեացն կողմ »
 (պակասի)

« բռւթեան »
 « նմին հակառակ »
 « շնորհաք առաքինութեան »
 « բերել ձեւ »
 « անցեալ 'ի մեջ նշանակէ »
 « նոյն և տարածմամբ »
 « 'ի վերին օդնականութիւնն »
 « զզօյս ցուցաներ »
 « նախախնամական զօրութիւնն »
 « Եւ իսկոյն 'ի տգաց միայն »
 « մախաղ ընդ անութ »
 « բերելով »
 « զողորկագոյնն »
 « և, որ 'ի ճահ »
 « յարձնակեալ »
 « ջախջախելով արկաներ ըստ »
 « 'ի ներքս յուղիղն »
 « միութեն »
 « զօրութիւն »
 « հասանելով 'ի վերայ արագապէս »
 « աներկբայար »
 « քաջարութեամբ »
 « անդրէն »
 « հատուածեր »
 « Յորմէ 'ի փախուստ գարձեալ այնու-
 « հետեւ այլազգեացն լիներ կողմն »
 « համագունդ յարուցելոց 'ի վերայ »
 « և առ աճապարելն իութեապիւր լի-
 « այնպէս կեւք վերջացեալք 'ի փա-

գամ ենթաղրելն իսկ, թէ խոսրովիայ և խորենացւայն ընծայուած «Ալտա-սանութիւնքն» երկու իրարմէ անկախ թարգմանութիւններ եղած ըլլան՝ մի և նոյն յունարէն բնազրէն :

Հինգերորդ դարու խոսրովիկին ընծայուած իբրև երկրորդ գիւտ մ'ալ, ինչպէս ըստեցաւ, կը ծանուցուի հետեւեալ թերատ գրութիւնն «Ու այնուիկ, որք ասեն բնուրեաւմբ անձն և անսկիզբն ընկալեալ զմարդկուրժիւն Աստուած թամ 'ի կուսէն», որ իբր թէ նոյնպէս բոլորովին անծանօթ մաշել է ցարդ մեր բանաէրներուն, և թէ յամի Տեառն 1675 յերուասղէմ գրուած ձեռագրին (թիւ 655 ըստ Մայր-ցուցակին) մէջ միայն կը գտնուիր Բայց մենք շենք կարծեր, թէ յիշեալ գործն մեր բանաէրներուն առհասարակ անծանօթ եղած ըլլայ: Ասկայն ենթաղրելով թէ ոչ աւենուն, այլ գէթ շատերուն ծանօթ չըլլայ, կը ծանուցանենք 'ի գիտութիւն Միքարանին և ամենայն ուսումնասիրաց, թէ ոչ միայն այս գործն՝ որուն մկզբնաւորութիւնն է. «Ոչ սկրուզ եղբէ՛ նախ քան վլախնան առնուլ մեղացն» ևայլն անթերի կը գտնուիր մեր Ձեռագրատան թիւ, 504, ի. գ. ձեռագրին⁽⁴⁾ մէջ, որուն հազիւ թէ փոքրազրյն մասն մի է կըմիածնի ձեռագրինը, այսինքն է իբր

• • • • • • • • • • • • • • • •	« Խըստեամն սրյ լինէին կուր, և « այլքն առաջի »
« Եւ անդ զոմանս	« Եւ անդ զորէն անբանից զոմանս »
« և զոմանս բազում »	« և զոմանս հանդերձ բազում »
(պակասի)	« յիշեանցն խաղացուցանեին տանել « քազաք վայելով ամենագեղեցիկ « բարեբաղդունթեամբ »
« տեսանելով »	« 'ի տեսանելն պրանելապէս թերկե- « ցայ գեշտութեամբ լի, և զնյոյն « գարճեալ »

Այս բազդատութենէս ակներե, կը տեսնուի, թէ մեր գրչագրերն աւելի կատարեալ են, նա մանաւանդ Պիլի Թուրին գրուածը:

1. Որ է բոլորդիր տեմնալուիր, բամբակեայ թղթի վրայ. Թէպէտե. յիշատակարանին մէջ գրութեան տարեթիւը նշանակուած չէ, բայց ամենայն վստահութեամբ կարենք ասել, թէ ԺՓ գարու երկրորդ կիսում գրուած ըլլայ. մանաւանդ թէ այս է, կարծեմ: զոր Ցովչ. Երշշկացի իւր ողջութեան ժամանակ 'ի մի հաւաքել և գրել տուաւ: Այս բանս յայտնապէս կը տեսնուի նոյն իսկ յիշտակարանէն, որուն գրիչն է Ցովչաննէս քահանայ ոմն, և կընծայէ առ սուրբ Վարդապետն Ցովչան: Մեծութիւնն է 17×13 ար. — Թերթք 336 (672 երես). — Ծովք իւրաքանչիւր իշխն 27, — Հանդամանք՝ 'ի վերջը Թուղթ մի անկեալ է. — Կաշեկազմ փայտեայ. — Առանց նկարի և անզարդ է. — Խորագիրք գրուածոց և գլուխներուն առաջին տասերը միայն խոշոր երկաթագիր են՝ կարմրագեղով դըրուած: Առաջին Ցովչթը կը ներկայացնէ ձեռագրին մէջ հաւաքեալ եւաթիւ գրոց «Նախապարութիւնը», զոր Ցովչ Եղնկացն շարագրած կ'երևի, այսինքն է Անանիս Սանահնեցւայ, Խոսրովիայ և Սարկաւագի գրուածքն այս գրչագրիս մէջ

10 երես առ 6 թ : Այլ որ մեծագոյնն է և շատերուն յոյժ շահագրգիռ՝ դիւտելու ենք, որ բաց 'ի այս ընդարձակ ճանէս՝ կը գտնուին մեր յիշեալ ձեռապրին մէջ, — կից առաջնոյն, — խոսրովիայ ուրիշ չորս գրուածներ ևս, ընդ ամէն 85 թերթ, հետեւալ խորազրովէ՛ Ա. ոյն «Խոսրովիայ բարգմանի Հայոց առ այնուիկ որ ասեն բնորեամբ անձն անսկիզրն ընկալեալ զմարդ կորին Աստուած Բան 'ի կոչսկն» . — Բ. րդին «Յաղագս թէ Պամրա և զմարսինն տէրունական համագոյ ասել Աստուածն Բանի, կամ թէ մարմենյ և թան և մի բնորին ասել, երկ ոչ» . — Գ. րդին «Առ այնուիկ որ յերկու զմարդիայինն անձատնեն, բնորին այլ գոյ ասեն յատազ քան զյանցանեն և այլ զինի յանցանացն» . — Դ. րդին՝ Առ այնուիկ որ տարակուսին 'ի վրայ փրկչականն կրից մարդկայնց . թէ բնական պարտ և

հաւաքել և գրել տուած ժամանակ : Այս նախագրութիւնս «Արարատի» վերը յիշուած թոււնն մէջ Թարտառապուած լինելով արդէն, աւելորդ կը համարինք վերըստին մէջ թերել : Անանիայի բրութեան վերնադիրն է . «Անանիա վարդապետի Հայոց բան հականատորեամ ընդդեմ երկարնակաց, զոր գրեաց հրամանաց ջնան Պետրոսի Հայոց վերադիտոյի» : Իսկ Սարկաւագինն է . «Յովհաննու քահանայի յաղագն նշանակ հաւատոյ նիկիականն օթիլ իցն» :

Խոսրովիայ գրոյ գրչութեան յիշատակագրութիւն և այսպէս .

«Փառք սուրբ երրորդութեանն . Ցաւիտեանս ամէն Պատուելի եւ աստուածային ջնորիալքն լցեալ սուրբ Վ.'ո՞ն յո՞ն . ընգալ զսակալ գծիկս 'ի նուաստ անարժան քամին յուիհաննիսէ, և յիշեալ զիս անմոռաց յիշմամբ յաղաւես քո և խոշորութեան եւ սղալսնաց որ ՚ի սմա մի մեղադեր, զի աւրինակն գր(ութեան) պակաս էր եւ իմ կարն այսշափ . Եւ դա յիշեալ իմից 'ի տուորիչն արարածոց եւ նմա փառք յաւիտ'ու:

Անմիջապէս մէկ տող վար գրուած է սուացոյն յիշատակարանն այսպէս .

«Ո՛ւրդ՝ յերեսս անկեալ պատասխմ մանկանց սուրբ եկեղեցւոյ, որը հանդիպէք աստուածայինն կտակին՝ յիշեալիք զվերինն սուացաւը զնուաստ վարդապետը և զնուապետը և զմարմնաւոր ծնաւղքն իւն: Եւ ետու զսա թովմա վարդապետի որ հանապազ ընթեռնու և յիշել զեեզ յաղաւեն իւր: Եւ քրիստոս աստուած որ առաւտն ՚ի տուրք բարեաց, զձեզ յիշել ՚ի փառս եւթնալիր աւրհնութեանն ամէն:

Ի թվականին Պէտր ամի հայկակեանս տուամրի» .

Ուրիշ շղագիր օրինակ մ'ալ (թիւ 319, Դ. 4) ունինք մեր Զեռագրատանը մէջ, որ ընդօրինակուած է Արմացու վանքի, թիւ 1827, գրչագրէն մթռամբ Յովհաննու Տէր Կարապէտեան Պրուացոյ. ինչպէս վերջինն աշ ընդօրինակուած էր յամին 1798 իւսկիւտարի Ալեամիկ թաղը բնակող Տէր . Մարտիրոս կուստիլոն Սարկաւագին մեռագրէն, զոր ինդրեց անանուն ոմն Պրուսացի գաղափարէց համար: Այս նոր շղագիրն մէջ եղած յիշատակարանէն այնպէս կ'երել, թէ ուրիշ հնագոյն օրինակ մ'ան տառնոք եղած ըլլայ, յիւսկիւտար: Բայց ես կործեմ, թէ այդ հնագոյն մեռագիրն ուրիշ բան չեր՝ բայց եթէ մեր թիւ 804 օրինակն, զոր վեր. Հ. Փիլիպպոս Թերքիման Ալղանեան գնելով 'ի Կ. Պոլիս 300 գահեկանի յամին 1830 յզեց 'ի վասն:

ասել թէ անքնական։ Նախադիր բանից առ Արանաս Անտիռքացի։ — Ե. բղինը՝ «Նորին խոսրովու բռնդր առ Տէր Սարգիս եպիսկոպոս Գերադեհորոյ»։

Այս խորագիրերէս արդէն կարեն իմանալ ընթերցողք, փոքր՝ 'ի շատէ, թէ ի՞նչ նիւթերու վրայ կը զառնան խոսրովից ճառերն։ Ես չկարեմ այսըմ ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել անոնց մասին, զի յօդուած ու զածէս աւելի ընդարձակուեցաւ։ Առաջին ճառը՝ ընդգիմարանութեան ձեռվ պատուախան մ'է առ ինքն ուղղեալ անանուն եպիսկոպոսի կամ մի ուրիշ բարձրաստիճան եկեղեցականի և իշխանի գրութեան, որ կ'ուզէր 'ի հաւատոյս միութիւն առնել ընդ եկեղեցւոյն Հոռոմոց։ Երկրորդն և երրորդն՝ ընդդիմաբանութիւններ են այյևայլ մոլորութեանց՝ Քրիստոսի բնութեանց և այլ իրաց նկատմամբ։ Չորրորդին մէջ կու գայ, 'ի ինպրանաց Աթանասայ պատրիարքին Անտիքայ, հերքել զմոլորութիւն թէողիանեայ ուրուն գոցես իմն ժամանակացի։ Հինգերորդին մէջ կը խայտառակէ Յուլիանիստներու, Սեերեայ և Յակոբայ կամ Յակոբիկեան հերձուածը, խատիւ յանդիմանելով զՍարգիս եպիսկոպոս Գերապեկորոյ։

Ճառերուս հեղինակը ներկուու մէկն է Աստուածարանական, իմաստասիրական և պիրճախօսական մակացութեանց։ Ա. Գրոց և Հարց գիտութեամբ քաջահմուտ։ Խորիմաց և մեծահանճար միաց մի կը տեսնուի։ զօրաւոր բանիւք և վարդապետական հեղինակութեամբ։ Մեր եռամեծ իմաստասիրին, այսինքն է Ցոլիան Օձնեցի պարզցին կարծես աշակերտ է և ընկեր հանգիստասիր։ բայց Խոսրովից լեզուն աւելի յատակ է և հայկարան։ Եզնը-կայ պէս կորուիի է, կարուկ, պայծառ և ճարտար 'ի դարձուած բանից և ամենադժուար գաղափարաց բացատրութեանց մէջ, թէպէս և լատ ամենայնի մի և նոյն ոսկեղէն բոլին թափուած չեն։ Այնպէս որ եթէ բարեբազարաբար նորա ճառերու մէջ որոշ պատմական և ժամանակազրական յիշատակութիւններ մեզ առձեռն պատրաստ վլինէին, իրաւամբ Միաբանի հետ պիտի ըբոթէինք զնա ոսկեղարու համանուն հեղինակին հետ։

Սակայն զիմացնիս ունենալով ակնյամանի և գրէթէ շօշափելի ապացոյցներ, կարող ենք ըսել ամէն վստահութեամբ, թէ Խոսրովիկս այս բնաւ վերաբերութիւն չունի ի դարու Խոսրովիկ թարգմանչին հետ, և ոչ ալ ե դարուն՝ Խոսրովիկն կամ այլ ոք կարէր հակաքաղիկեգոնեան լինել։ Շւատի հետեւապէս Միաբանը կրնայ զեռ մի ուրիշ նոր յայտնութեան սպասել յիշեալ զարու մատենազրութենէն, բաւական է, թէ անկէց ևս ձեռնունայն և յուսափափ չի մնայ։

Իսկ մենք համոզուած ենք, թէ Վերոյիշեալ հնգաթիւ ճառերու կամ թղթոց հեղինակն՝ Բ. դարու առաջին կիսում կամ Յոլիան Օձնեցու ժամանակամիջոցին ժամփած պէտք է որ ըլլայ. և անաւասիկ մեր փաստերը։ Ա. Դիտելու ենք՝ որ առ Աթանաս Պատրիարքն Անտիքայ գրուած թղթոյն մէջ կ'ըսուի. «Յիշես ապաքէն յորժամ՝ հրամայեցեր 'ի դերայիդրոշտադ

եպիսկոպոսացն թէովոտեայ և Աթանասի հարցանել զիս վասն հաւատոյ» և այն։ իսկ արդ Աթանասս այս, զիտեմք՝ 'ի պատմովենէ⁽¹⁾, թէ յամի տեառն 726 յղեց 'ի Հայո և առ Յովհ։ իմաստասէր կաթողիկոսն վեց առորի եպիսկոպոսներ, քննելու այն սուսա ամբատանութիւններն, որով Աստրիք զՀայս Յովիանիսս կը համբաէին։ և իրօք այս եպիսկոպոսաց մէջ կը յիշուին թէովոտ կամ թէոդոտ եպիսկոպոս Դարձամակաց և Արանաւ՝ եպիսկոպոս Նժրկերոտոյ։ Այս դէպովլ ուրիշ ծածկեալ ճշմարտութիւն մ'ալ կը յայտնուի. այսինքն է, Բարեբբեռս առ Ասսեմաննեայ և Կիրակոս կ'աւանդեն, թէ այս առթիւ ժողով մի գումարեց Յովհ։ Օձնեցին միւնքյն տարին, յորում ներկայ գտնուեցան ուրիշ վեց Հայ եպիսկոպոսներ ևս, և առենայն ինչ կարգադրելէն յետոյ, Թուղթ մ'ևս զրեց առ Պատրիարքն Խորոց Աթանասօս։ Արդ՝ զիտելով որ այս թուղթս է խորովիայ ընծայուած դ։ ճառական պատասխանին, կարեմք ասկէց եղակացնել, թէ կամ խորովիկո՞ Յովհ։ Օձնեցու կողմանէ զրեց զայն 726ին, և կամ անոր բռնն հեղինակն եղած է Օձնեցին, զոր ապա ուրիշները կամ վրիպակու և կամ զիտմամբ խորովիկ մարգամանչի անուամբ մակազրած են։

Բ. Առ Սարգիս եպիսկոպոս զրած թղթին մէջ խօսելով Յուղիանիտաց և Աւերիանեանց վրայ կ'ըստի, թէ « Եւ կացին մնացին յայս գրի (զօր հանեց Յուստիանոս յառաջին ամի գահակալութեան իւրայ) երկերից ամ սակաց կամ առելի 'ի նմին կործանման » : իսկ արդ Յուստիանոսի գահակալութեան տարին էր 548, որուն վրայ յաւելցնելով 200 տարին կ'ունենանք Յովհ։ Օձնեցու կաթողիկոսութեան առաջին տարին, այսինքն է 748. իսկ եթէ հեղինակէն յիշուած « աւելին » ալ 6-8 տարուան միջոց մի համարիք, կը մօտենանց գարձեալ 726 թուականին։ Սակայն ինձ աւելի հաւանական կ'երեխ ըսել, թէ այս հինգերորդ թուղթս 726 էն կամ առ Աթանաս զրեալ թղթին վերջը դրուած ըլլայ՝ առ Ապրօփիս եպիսկոպոսն ասորի Յակոբիկեանց՝ 'ի Գերմանիկիս Միջագետաց. վասն զի կ'ըստի որոշակի. « Յիշեցաք սակաւուց զրազմազան նորա (Աւերիանոսի) հայոցանան 'ի բղդին որ առ Պատրիարքն Արանաս վասն թէովիտեայ » : Ուրեմն ամենաորոշ է խորովիայ կենաց և զրութեան տարեթիւն։ Բայց թէ անկէ վերջ զեռ ո՞րչափ ապրեցաւ, և ի՞նչ վերջ ունեցաւ, որոշ բան մը չենք կրնաք բաել։ Կիրակոս⁽²⁾ կը յիշէ Անանիա Մոկացի կաթողիկոսին ժամանակակից խոսրով եպիսկոպոս մի, որ կը վարդապետէր թէ պէտք չէ հնազանգել կաթողիկոսին, ըսել կիրակէ, զի հոռմերէն է, այլ կիսակէ, և թէ պէտք չէ հատանել զիերս և այլն. կաթողիկոսը զրեց առ նա երկիցս, և երիցս, բայց 'ի զուր. զի ապստամբելով 'ի կաթողիկոսէն ամրացաւ Ախնեաց բերպին մէջ ընդ հովանեաւ. տիկնոշն, և հոն մեռաւ։

Բայց այս ժամանակս անյարմար է, և կարելի չէ վերոյիշեալ ճառերու

1. Բարեբբեռս առ Ասսեմանի Բ. — Կիրակոս, Հ. Միք. Զամիչ, Բ. Հու.

2. Կիրակոս. Պատմ. Վենետիկ 1865. էջ 48.

գրութեան ժամանակին հետ միաբանել։ Սակայն անտեղի չէ ըսել, թէ կամ կիրակոս ժամանակազրուկան կարգ պահած չէ անդ, թերևս թովէն։ Օձնեցու ժամանակ պատահած դէպքը շփոթելով անկէց շատ տարիներ վերջ եկող Անանիա Մոկացւոյ ժամանակին հետ։ և կամ խօսրովու վերազրուած ըլլան Օձնեցու անցայտացած ճառերը, մեզի անցայտ նպատակաւ մի։ Առաջին են՝ թաղրութիւնն եթէ սոսոյդ համարինք, այն ատեն յայտնած կը լինինք, թէ ո՞վ է այն անանուն հայրապետն՝ առ որ ուղղած է խօսրով իւր առաջին թուղթն, և թէ ինչո՞ւ համար այնքան յանդուքն արհամարտնօք կը շետէ հետևեալ խօսքերը «Գրով զձերն առ իս առաքեցէք խօստովանութիւն, 'ի ձեռն պրոյ և զպատախանիսն ընկալիիք յինէն զայդորիկ համաձայն...» կարծէր 'ի զբելոցն մերոց առ նա՝ ընդ հնոց օրուք չարաղանդութեամբ զմեզ արկանել... մանաւանդ զի և պարզեալ զնա կամեցաք, 'ի պատասխանականացն անտի նորայոց առ մեզ զրեցելոց, թէ զի՞նչ խորհիցի. և ո՞մ ումեզ արդեօք ձայնակից գոտանիցի. և է՞ր այս. ոչ ինչ պէսու ունի առաջնորդի՝ որոյ ալք իւր առողջապէս կարիցեն նկատել. և ոչ վարդապետի ոչմեք կարօտացի որ զամենչարն սիրեսկ գուսենել հաշատոցն բան»։

Խօսրովիկի մասին՝ այստափու կը բաւէ. իսկ անոր գրուածոց պարոնակութեան և վարդապետութեան մասին, այսինքն թէ, Է՞ իրաւունէ միաբնակոմն կամ հակաբաղկեթեան եթէ ընդ հակառակն հասկանալի է, կը թողունք գրուածոցս հրատարակութեան ժամանակին, եթէ փափաքեն երբէք սիրողք և յարգողք մեր նախնեաց գործերուն հրատարակուած տեսնել զայն։

Հ. Բարսեղ Արքունական

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՓԱՅԻ

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅ-ԿԱՊՈՒՄԱԿՑ

(ՏԵՍ Դէջ 109)

Ժ.Ա.

ՊԵՌԴԱՍԻ մեծ հրապարակին միջալայրը, ուր երեմն շքեղափայլ կանգնուած էր առ գենուացաւովք Սուրբ Ազնէս եկեղեցի ֆրանկաց, և ապա բազմագմբէթ մզկիթ մնյիմանաց, այժմ շինուած է վայելլաձև մայր եկեղեցին թուաց. յարեւակողմն կայ միւս ալ փոքրագրն հրապարակի, և հարաւային ճակատը մի խորհրդաւոր չէնք, որոյ վրայ առաջին անգամ՝ նայողը՝ խառնուրդ մը կը գտնէ քրիստոնէութեան կրօնի և խլամութեան։ Յաղթաձեւ քականութիւնը չէնքը, որոյ վերայ լայնատարած կաթուղիկէն՝ իրեւ հակայի մը զր-